



«Չվարթնոց»

(ճարտարապետական հուշարձան)

Հայաստանը, որպես հնագույն քաղաքակրթության բաղկացուցիչ մաս, հայտնի է վաղագույն ժամանակներից:

Մ.թ.ա. IV-II դարերում հայաբնակ շրջանները բաժանված էին երեք խոշոր վարչական միավորի՝ Փոքր Հայք, Ծովք և Մեծ Հայք, որոնք արդեն Ք.ա. II դարում դարձան անկախ պետություններ: Դրանց մեջ ամենից զորեղը Մեծ Հայքի պետությունն էր, որտեղ Ք.ա II դարից մինչև Ք.հ V դարը նախ թագավորում էին Արտաշեսյանները, ապա Արշակունիները:

Մեծ Հայքը բաղկացած էր 15 «աշխարհներից», որոնք բոլորը միասին ունեին 191 գավառ: Այդ «աշխարհներն» էին. Տայք, Բարձր Հայք, Չորրորդ Հայք, Աղձնիք, Կորճայք, Մոկք, Պարսկահայք, Փայտակարան, Արցախ, Ուտիք, Սյունիք, Գուգարք, Տուրուբերան, Վասպուրական և Այրարատ, որը ամենահայտնի «աշխարհն» էր՝ որպես քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի կենտրոն:

Նոր և նորագույն ժամանակներում պատմական Հայաստանի տարածքը բաժանված էր արևմտյան և արևելյան հատվածների, որոնք ընդգրկված էին Օսմանյան Թուրքիայի և Իրանի (1828 թվականից Ռուսաստանի) կազմում:

Խորհրդային տարիներին Հայաստանի տարածքը բաժանված էր 37 շրջանների:

Հայաստանի Հանրապետության ներկա վարչատարածքային բաժանումը՝ 10 մարզ և Երևան քաղաքը ձևավորվել է համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Հայաստանի Հանրապետության պետական անկախության հռչակագիրն ընդունվել է 1990թ. օգոստոսի 23-ին, իսկ անկախության հռչակման հանրաքվեն անց է կացվել 1991թ. սեպտեմբերի 21-ին: Նույն թվականի դեկտեմբերի 21-ին Հայաստանը դարձել է ԱՊՀ անդամ, 1992թ. մարտի 2-ին՝ ՄԱԿ-ի անդամ, 2001թ. հունվարի 25-ին՝ Եվրախորհրդի անդամ, իսկ 2003թ. փետրվարի 5-ին՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ:

2015թ. հունվարի 2-ից Հայաստանի Հանրապետությունը միացել է Եվրասիական տնտեսական միությանը:

Պետական լեզուն հայերենն է, որը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին, ազգային արժույթը՝ դրամն է, որը շրջանառության մեջ է դրվել 1993թ. նոյեմբերին:

Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, գլուխ 1, հոդված 1):

Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, գլուխ 1,

հողված 2):

Հանրապետության նախագահը պետության գլուխն է: Նա հետևում է Սահմանադրության պահպանմանը և իր լիազորություններն իրականացնելիս անաչառ է ու առաջնորդվում է բացառապես համապետական ու համագային շահերով:

Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը:

Կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է, որը իր ծրագրի հիման վրա մշակում և իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը:

Վարչապետը Կառավարության ծրագրի շրջանակներում որոշում է Կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները, ղեկավարում է Կառավարության գործունեությունը և համակարգում է Կառավարության անդամների աշխատանքը: Վարչապետը կարող է Կառավարության անդամներին կոնկրետ հարցերով հանձնարարականներ տալ: Վարչապետը գլխավորում է Անվտանգության խորհուրդը, որի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, գլուխ 6, հոդված 152):

Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, գլուխ 1, հոդված 4):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՏԱՐԱԾՔԸ

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Ասիայի արևմտյան մասում: Գրավում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան հատվածը՝ Կով-կասի և Առաջավոր Ասիայի միջև (Կուր և Արաքս գետերի միջին հոսանքների միջգետային տարած-քը): Ընդհանուր տարածքն ընկած է հյուսիսային լայնության 38° 50' - 41° 18' -ի և արևելյան երկայնության 43° 27' - 46° 37' -ի միջև:

Սահմանակից է Վրաստանին, Ադրբեջանին, Թուրքիային և Իրանին:

Երկրի տարածքը կազմում է 29 743 կմ², որի 68.7%¹-ը կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերը, 11.2%¹-ը՝ անտառային, 11.3%¹-ը՝ հատուկ պահպանվող տարածքների և 8.8%¹-ը՝ այլ հողերը: Հայաստանի Հանրապետության տարածքի 36.4%-ը լեռներն են, բարձրավանդակներն ու այլ հողերը:

Երկրի ամենաբարձր կետը Արագած լեռնա-գագաթն է (4 090 մ), ամենացածր կետը՝ Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանը (375 մ): Ամենաերկար ձգվածությունը հյուսիս - արևմուտքից հարավ-արևելք 360 կմ է, իսկ արևմուտքից արևելք՝ 200 կմ:

ԼԵՌՆԱԳԱԳԱԹՆԵՐԸ

Հայաստանը լեռնային երկիր է: Տարածքի 76.5%-ը գտնվում է ծովի մակերևույթից 1 000-2 500 մ բարձրության վրա: Լեռնաշղթաները զբաղեցնում են մոտ 14 հազ. կմ² տարածք կամ երկրի ընդհանուր մակերեսի 47.0%-ը: Բարձրավանդակները կազմում են երկրի մակերեսի ավելի քան 1/3-ը (11 հազ. կմ²):

Հայաստանի տարածքը յուրահատուկ երկրաբանական թանգարան է: Այստեղ կարելի է գտնել երկրակեղևում առկա համարյա բոլոր ապարները: Հայաստանի ընդերքը հարուստ է բազմազան օգտակար հանածոներով: Հրաբխային ժայթքումների հետևանքով գոյացել է բնական շինանյութերի՝ տուֆի, բազալտի, անդեզիտի, պեռլիտի և շինարարությունում օգտագործվող այլ հանքանյութերի մեծ պաշար:

¹ Ըստ կադաստրի կոմիտեի կողմից կազմված Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշռի՝ 2019թ. հուլիսի 1-ի դրությամբ:

Անվանումը	Տեղանքը	Բարձրությունը ծովի մակերևույթից, մ
Արագած	Արագածի լեռնագանգված	4 090
Կապուտջուղ	Զանգեզուրի լեռնաշղթա	3 906
Աժդահակ	Գեղամա լեռնաշղթա	3 598
Սպիտակասար	Գեղամա լեռնաշղթա	3 555
Իշխանասար	Ղարաբաղի բարձրավանդակ	3 552
Վարդենիս	Վարդենիսի լեռնաշղթա	3 522
Արամասար	Բարգուշատի լեռնաշղթա	3 392
Բաղաջար	Մեղրու լեռնաշղթա	3 250
Խուստուփ	Խուստուփ-Կատարի լեռնաշղթա	3 214
Լեզլի	Զավախքի լեռնաշղթա	3 157
Գոգի	Վայքի լեռնաշղթա	3 113
Թեժ լեռ	Փամբակի լեռնաշղթա	3 101
Մեծ Եղնախաղ	Եղնախաղի լեռնաշղթա	3 042
Բովաքար	Հալաբի լեռնաշղթա	3 016
Միափոր	Միափորի լեռնաշղթա	2 993
Ուրասար	Բազումի լեռնաշղթա	2 993
Քաշաթաղ	Սևանի լեռնաշղթա	2 901
Արայի լեռ	Արայի լեռնագանգված	2 577

ԽՈՇՈՐ ԳԵՏԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԻՂՐՈՒՈՒՄԻ ԱՎԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻ ՉՆԵՐՈՂ

Անվանումը	Երկարությունը Հայաստանի Հանրապետության սահմաններում, կմ	Միջին թեքու- թյունը,	Ջրհավաք ավազանի մակերեսը, կմ ²	Միջին տարեկան ելքը, մ ³ /վրկ	Միջին տարեկան հոսքը, մլրդ.մ ³
Արաքս ²	192	-	22 100	80.1	2.53
Ախուրյան	186	5.7	9 650	14.3	0.45
Դեբեդ	154	11.0	3 790	23.8	0.75
Հրազդան	141	7.6	2 560	7.97	0.25
Որոտան	111	21.0	2 000	18.1	0.57
Արփա	92	24.0	2 080	19.6	0.62
Քասախ	89	29.0	1 480	4.02	0.13
Փամբակ	84	13.0	1 370	9.33	0.29
Աղստև	81	31.0	1 730	8.58	0.27
Ջորազետ	67	22.0	1 460	10.4	0.33
Գետիկ	58	29.0	586	2.38	0.08
Վեդի	58	33.0	633	2.10	0.07
Արգիճի	51	12.0	384	5.24	0.17
Գավառազետ	50	25.0	480	3.91	0.12
Մասրիկ	45	22.0	685	4.14	0.13
Ողջի	43	68.0	788	9.36	0.30
Ազատ	40	31.0	572	3.63	0.11
Մեղրի	36	63.0	336	3.53	0.11

¹ Տրամադրվել է «Հիդրոոգեոլոգիականության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Այն գետերի համար, որոնք դուրս են գալիս հանրապետության սահմաններից, տվյալները բերված են հանրապետության սահմանների մասով:

² Ըստ Հայկական ՍՍՀ ջրագրությունը, ՀՀ ԳԱԱ, 1981թ., էջ 108

ԼՃԵՐԸ

միջին տարեկան ցուցանիշներ

Անվանումը	Մակարդակի նիշ, մ	Ծավալը	Հայելու մակերեսը, կմ ²
Սևան (2019)	1 900.57	38.266 կմ ³	1 279.18
Սև	2 666	9 մլն. մ ³	2.0
Ակնա	3 032	3.91 մլն.մ ³	0.8
Քարի	3 190	357 հազ. մ ³	0.3
Այդր	860	310 հազ. մ ³ / ths. m ³	0.03
Կապուտան	3 286	40.2 հազ. մ ³	0.1

ՄԵՎԱՆԱ ԼՃԻՑ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ ԵՎ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՏՍՏԱՆՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ԱՄԻՄՆԵՐԻ

Հայաստանի տարածքում ամենամեծ լիճը Սևանա լիճն է (2019թ. միջին տարեկան մակերեսը 1 279.18 կմ²), ամենաերկար գետն Արաքսը՝ 192 կմ (ընդհանուր երկարությունը՝ 1 072 կմ):

Հանրապետության վերականգնվող քաղցրահամ ջրային ռեսուրսները կազմել են 4 389.0 մլն.մ³: Հայաստանի գետերը հիմնականում լեռնային են, խիստ արտահայտված մեծենային (սակավաջուր) հոսքերով:

Տարի-ներ	Ջրի բացթողումները, մլն. մ ³ տարի	ԼՃի մակարդակը /մ/ և ամսական տատանումները /սմ/													Ջրի մակարդակի նիշը տարեվերջին	Ջրի մակարդակի տատանումները տարվա ընթացքում,սմ ¹
		Ջրի մակարդակի նիշը տարեվերջին	մակարդակի ամսական տատանումները նախորդ ամսվա համեմատ, սմ											Ջրի մակարդակի նիշը տարեվերջին		
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	Սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր			
2015	167.74	1 900.13	-1	+1	+4	+16	+19	+4	-10	-12	-8	-1	-2	-4	1 900.19	+6
2016	167.13	1 900.19	+3	+6	+5	+12	+22	+10	-5	-8	-8	-5	-2	-3	1 900.46	+27
2017	266.76	1 900.46	-1	+2	+5	+17	+19	-	-10	-13	-12	-5	-3	-3	1 900.42	-4
2018	200.62	1 900.42	-1	+4	+5	+12	+13	+8	-9	-10	-9	-8	-6	-2	1 900.39	-3
2019	143.86	1 900.39	-2	+3	+6	+9	+19	+7	-4	-14	-4	-6	-6	-4	1 900.43	+4

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվում են քաղցրահամ լճեր և ջրամբարներ մոտ 40.0 մլրդ. մ³ ընդհանուր ծավալով, որի մոտ 95%-ը կազմում է աշխարհի ամենաբարձրադիր լեռնային լճերից մեկը՝ Սևանը: 2019թ.-ին լճի մակարդակի միջին նիշը կազմել է 1 900.57 մ, իսկ միջին ծավալը՝ 38.2 մլրդ. մ³:

Սևանա լիճ է թափվում 28 գետ և գետակ, լճից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը: Լիճ անտնտեսվար և անինսա օգտագործումից խիստ տուժել է և ջրային պաշարները զգալիորեն նվազել են: Լճ մակարդակի իջեցման, ինչպես նաև լիճ թափվող անբավարար մաքրված հոսքաջրերի հետևանքով, կտրու վատացել էր նաև ջրի որակը: Իրավիճակը մասնակիորեն մեղմացնելու և Սևանի ջրային պաշարներ

¹ Ըստ ամիսների հանրագումարի հետ անհամապատասխանությունը պայմանավորված է ցուցանիշների կլորացմամբ:

Արփա գետի ջրերով ավելացնելու նպատակով 1981թ. կառուցվել է 48 կմ 420 մ երկարությամբ «Արփա Սևան» թունելը, որը լճի հետ միանում է 850 մ երկարությամբ բաց ջրանցքով:

Լճի պահպանության վերջին տարիների համալիր միջոցառումներն արդյունավետ իրականացնելու շնորհիվ զգալիորեն բարձրացել է ջրի մակարդակը: 2019թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել է 1 900.81 մ, որ նախորդ տարվա նույն օրվա համեմատ ցածր է 2 սմ-ով:

ԱՐՇԵՍՏԱԿԱՆ ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՋՐԻ ՀԱՅԵԼՈՒ ՄԱԿԵՐԵՍՆԵՐԸ

Անվանումը	Ծավալը, մլն. մ ³	Հայելու մակերեսը, հա	Լցվածությունը ³ տարեվերջին, մլն. մ ³
Ախուրյան	525.0	4 180	194
Սպանդարյան	257.0	1 025	•
Թուրքս	96.0	480	•
Ապարան	91.0	735	14.2
Ազատ	70.0	285	9.37
Ջողազ	45.0	230	•
Հեր-Հեր	26.0	115	•
Կեչուտ	25.0	135	•
Կառնուտ	24.7	234	•
Մարմարիկ	24.2	120	2.15
Գեղի	15.0	35	•
Շամբ	13.6	112	•
Հախում	12.0	83	•
Մանթաշ	8.2	76.4	•
Թավշուտ	6.0	60	•
Սևաբերդ	6.0	45	•
Ախպարա	5.6	170	•
Հալավար	5.5	38	•
Մեծավան	5.4	330	•
Տավուշ	5.3	40	•
Արփի	105.0	450	7.00
Վարդաքար	5.0	86	•
Սառնաղբյուր	4.9	56	•
Երևանյան	4.8	95	•
Ակնալիճ	3.9	53	•
Դավիթ Բեկ	2.5	14	•
Արծվաշեն	2.0	26	•
Գեղարդալիճ	1.5	25	•
Քարահունջ	1.3	18.3	•
Ծիլքար	1.2	26	•
Հացաշեն	1.1	37	•

³ “.” - ով նշված ջրամբարներում 2019թ. ծավալի/լցվածության մշտադիտարկում չի կատարվել: